

ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը
Տետր 9: 1916 թ. հունվարի 27-ից մինչև փետրվարի 27-ը*

Բանալի բառեր – Թովմաս Նազարբեկյան, Մանազկերտ, Անդրանիկ, Քեռի, Դ. Աբացիև, Մ. Սիլիկյան (Սիլիկով), Էրզրում, Մուշ, Սասուն:

Թովմաս Նազարբեկյանի հուշերի 9-րդ տետրում ներկայացվում են 1916 թ. հունվարի 27-ից մինչև փետրվարի 27-ը տեղի ունեցած մարտական գործողությունները, որոնք ավարտին հասցրին Կովկասյան ռազմաճակատում սկիզբ առած արմատական բեկումը:

Թեև դրանց մի մասի նկարագրությունը ներկայացվել էր գեներալի հուշերի նախորդ՝ 8-րդ տետրում¹, սակայն իրադարձությունների առարկայական պատկերը վերականգնելու ու մանավանդ Էրզրումի և Մուշի ազատագրման մանրամասներին ծանոթացնելու համար Թ. Նազարբեկյանը մեկ անգամ էլ է թարմացրել հիշողությունը՝ շարադրելով իր հուշերի 9-րդ տետրը:

Բանն այն է, որ 1916 թ. հունվար-փետրվար ամիսներին Կովկասյան բանակը իրականացրել է միաժամանակյա գործողություններ, որոնք հնարավորություն են տվել հակառակորդի նկատմամբ օպերատիվ առավելության հասնելու ինչպես Տարոնում, այնպես էլ Բարձր Հայքում: Շարունակվում էր ռուսական բանակի հարձակումը Էրզրումի ուղղությամբ, որը նպատակ ուներ գրավել Արևմտյան Հայաստանում օսմանյան 3-րդ բանակի գլխավոր հենակետ-ամրոցը: Թ. Նազարբեկյանը հպարտությամբ է արձանագրում, որ ռուսական զորքերին հաջողվեց բնակլիմայական ծանր պայմաններում, քիչ կորուստներով գրավել անառիկ համարվող Էրզրումը: Էրզրումի պարետ նշանակվեց Կովկասյան 6-րդ գնդի հրամանատար, գնդապետ Մովսես Սիլիկյանը, որը քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում գտնվելով հայերին պատկանող մեծ քանակությամբ գույք՝ հեռագրեց Թիֆ-

* Ընդունվել է տպագրության 20.11.2020:
1 Տես «Վեմ», 2020, N 2, էջ 301-326:

լիսի քաղաքագլուխ Ալ. Խատիայանին՝ խնդրելով վստահելի մարդ ուղարկել այդ ամենը տնօրինելու համար:

Ինչպես գիտենք Էրզրումի գրավմանը զուգընթաց իրականացվել է նաև Մուշի ազատագումը ռուսական զորքերի այն խմբավորման կողմից, որը գլխավորում էր Թ. Նազարբեկյանը: Դրանից անմիջապես հետո գեներալը լինում է Մուշում, ուստի հետագայում մանրամասնորեն նկարագրել է թուրքական վայրագությունները: Հուշերում նա բերել է իր դիվիզիայի երկու սպանների գրավոր վկայությունները Մուշ քաղաքի և դաշտավայրի հայության զանգվածային կոտորածների մանրամասների մասին: Ընդ որում՝ դրանցից մեկը ստուգվել ու արձանագրվել է հայ և մահմեդական վկաների հարցաքննության միջոցով: Քաղաքում ողջ էին թողել միայն մի քանի հայ արհեստավորների, որոնք անհրաժեշտ էին բանակի կարիքները բավարարելու համար:

Մուշը և դաշտավայրը գրավելուց հետո, ռուսները ստիպված էին անընդհատ պայքար մղել թիկունքում գործող քրդական հրոսակախմբերի դեմ, որոնք խաթարում էին զինուժի կանոնավոր մատակարարումն ու կապը, ինչի հետևանքով հարկադրված էին զգալի ուժեր առանձնացնել թիկունքը պաշտպանելու և պատժիչ գործողություններ իրականացնելու համար:

1916 թ. փետրվարին ռուսները փորձեցին արագորեն տիրանալ նաև Բիթլիսին (Բաղեշ), սակայն առաջին փորձից անհաջողության մատնվեցին: Բայց համապատասխան օգնություն ստանալուց հետո գեներալ Աբացիևը փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը, այնուամենայնիվ, գրավեց Բիթլիսը:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերի հայերեն թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ, առանց կրճատումների: Մեր միջամտությունները ներկայացվում են ուղղագիծ փակագծերում: Բնագիրը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում:

Ռուբեն Օ. Սահակյան
Պատմ. գիտ. դոկտոր

Տեսք 9

28 սեպտեմբերի 1929 թ.

Թիֆլիս

1916 թ. հունվարի 27-ին Կամա-Կարագյոզում գտնվող ջոկատի ուժեղացման համար եկավ Կուբանյան կազակային զորքի 5-րդ հեծյալ կազակային մարտկոցը և մեկ հետևակ աշխարհագրային դրուժինա: Նույն օրը գեներալ Աբացիևից ստացվեց գորադասավորման հրամանը, որում ասված էր. «Հունվարի 28-ի առավոտյան գնդապետ Տրեդենսկու ջոկատին, որը կազմված է Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 4-րդ գումարտակի 3 վաշտերից, հրետանային դասակից և Չեռնոմորյան 1-ին կազակային գնդի 2 հարյուրյակներից, հրամայում են Կամա-Կարագյոզից շարժվել Խուր-կամի-Համզա-Շեյխ գյուղերով դեպի Լիր²: Մյուս ջոկատին, որը կազմված է աշխարհագրային հետևակ բրիգադից, Վոլգյան 3-րդ կազակային գնդից և Չեռնոմորյան 1-ին կազակային գնդի 3 հարյուրյակներից, Մանազկերտից առաջանալ դեպի Կոփ: Երկու ջոկատների առաջացման նշանակետը Բիթլիս քաղաքն է»:

Հունվարի 28-ի վաղ առավոտյան ջոկատը դուրս եկավ Կամա-Կարագյոզից: Եփրատի վրայի սառույցն արդեն շարժվել էր, կամուրջ չկար, ուստի ստիպված էինք մարդկանց տեղափոխել չեռնոմորցիների 2 հարյուրյակների ձիերի գավակների վրա: Մի կերպ տեղափոխեցինք գնդացրային ստորաբաժանման հակերը, հրետանու դասակը, ինչպես նաև գումակային և օրապարենի համար նախատեսված անասունները, իմիջիայլոց, սատկեցին մեծ թվով ոչխարներ: Գետանցումը ձգձգվեց: Աղահանքին հասանք կեսօրից հետո: Մեզ միացնելով այստեղ տեղակայված վաշտին՝ առաջացանք: Ճանապարհներ չկային, ձյունը հասնում էր մինչև գոտկատեղ, դժվարությամբ էինք տեղափոխում հակերը, քանի որ ձիերը մինչև որովայնը խրվում էին ձյան մեջ, ուստի ստիպված էինք թեթևացնել հակերը՝ պարենը բաժանելով մարդկանց: Առջևում գտնվող հետախույզների ջոկատը և Չեռնոմորյան 1-ին կազակային գնդի հեծյալ հարյուրյակը փոխհրաձգություն էին վարում նահանջող հեծյալ քրդերի հետ: Ջոկատը դանդաղ էր առաջանում, և Համզա-Շեյխ հասանք ուշ գիշերը: Սաստիկ սառնամանիքներ էին ուժեղ քամու հետ: Մարտական պահպանության պահակակետում մի քանի մարդ ցրտահարեցին ոտքերը, իսկ երկուսը սառեցին՝ չնայած հաճախակի հերթափոխին:

Հունվարի 29-ի առավոտյան թաղեցինք մահացածներին, իսկ ցրտահարվածներին կազակների հետ ուղարկեցինք Կամա-Կարագյոզ և շարունակեցինք առաջանալ: Առջևում էին չեռնոմորցիների 2 հարյուրյակները և հետախույզների ստորաբաժանումը: Ուժեղ քամի էր փչում, որից հետո ձյուն տեղաց և սկսեց ձյունահողմ: Առաջացող դետքերը ձնաբուքի պատճառով չնկատեցին Կարա-Ազ-

² Լիզ:

իլ գյուղի շինությունների հետևում դիրքավորված հակառակորդին և մոտենալով ընկան ուժեղ հրացանաձգության տակ: Հեծյալ հարյուրյակը և հետախույզների ստորաբաժանումը ցրված զորաշարք կազմեցին և անցան հարձակման գյուղի վրա ուժեղ հրացանաձգության տակ, որը վարվում էր ինչպես Կարա-Ազիլ գյուղի կողմից, այնպես էլ գյուղից աջ ընկած բարձունքներից: Առաջնագիծ ուղարկվեցին երկու վաշտեր, որոնք անցան հարձակման: Չեռնոմորցիների հարյուրյակի 13-րդ վաշտը և հետախույզների ստորաբաժանումը հարձակվում էին գյուղից աջ գտնվող բարձունքների, իսկ 14-րդ վաշտը՝ դեպի Կարա-Ազիլ գյուղը: Ձաքքի պատճառով դժվար էր որոշել հակառակորդի թիվը: Կրակն այնքան էլ արդյունավետ չէր: 14-րդ վաշտը գյուղին մոտեցավ 200-300 քայլ հեռավորության վրա և անցավ սվինամարտի՝ ստիպելով հակառակորդին փախչել. գրավեցին գյուղը: Երկու դասակներ ուղարկվեցին դեպի բարձունքը, սակայն թուրքերը լքեցին բարձունքները և արագ նահանջեցին:

Այդ նույն ժամանակ Մանազկերտից հարձակվող ջոկատը համառ մարտեր էր մղում Կոփ քաղաքի մոտ:

Հունվարի 30-ին դուրս եկանք Կարա-Ազիլից դեպի Թաղոտ, Օդոնչոր և Գեբուլան գյուղերը՝ գետանցելով Եփրատը: Օդոնչոր գյուղից դուրս գալիս հրետակոծվեցինք: Առջևում գնացող չեռնոմորցիները և հետախույզները փոխհրաձգություն սկսեցին: Հետախույզությունը պարզեց, որ բարձունքները զբաղեցնում են հետևակի 5-6 վաշտեր ու քրդեր: Հրամայվեց հակառակորդին դուրս մղել բարձունքներից և ուղղվել դեպի Գեբուլան: Գումարտակը վերակազմավորվեց մարտակարգի և առաջացավ:

Թուրքերը դիմագրավում էին՝ գնդացրային կատաղի կրակ արձակելով հարձակվողների վրա, և նահանջեցին Գեբուլան գյուղը միայն այն բանից հետո, երբ զորաշղթաները 500-600 քայլ հեռավորության վրա նրանց մոտեցան: Նահանջողներին հետապնդելու համար ուղարկվեցին չեռնոմորցիների երկու հարյուրյակներ: Գեբուլան մտանք, երբ արդեն մթնել էր:

Հունվարի 31-ին ջոկատ եկավ գեներալ Աբացիևը՝ չեռնոմորցիների հարյուրյակի հետ: Գնդապետ Տրեդենսկին ծանր հիվանդ էր, ուստի տարհանվեց հոսպիտալ, որտեղ և շուտով մահացավ: Ջոկատի հրամանատարությունը տրվեց Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, կապիտան Բոգոսլավսկուն: Փետրվարի 1-ին չեռնոմորցիների 2 հարյուրյակների կողմից Լիրի ուղղությամբ կատարվեց ուժեղացված հետախույզություն: Կարճատև հրաձգությունից հետո փախցրին քրդերին և գրավեցին Լիրը: Հակառակորդը սկսեց նահանջել դեպի Բելիջան-դազլարի լեռնաշղթան: Շրջակա գյուղերի բնակիչները հետևեցին նրանց:

Մինչ սեպտեմբերի³ 14-ից մինչև փետրվարի 2-ը Կովկասյան 4-րդ բանակային կորպուսում ընթանում էին զորափոխադրումներ, և շարունակվում էին մարտական գործողությունները, Մանազկերտից և Խնուսից հարավ, Սարիղա-

3 Հունվարի:

միջի ճակատում հունվարի 15-ից մինչև փետրվարի 4-ը ընդհանրապես՝ Կովկասյան բանակի և մասնավորապես այդ օպերացիաներում մասնակցություն ունեցած զորամասերի համար տեղի ունեցան հետաքրքիր իրադարձություններ:

Հունվարի 15-ին Կովկասյան հրաձգային գունդը Էկբատ գյուղից դուրս գալով՝ առանց կանգառի Հասանկալեյով ուղղվեց Չակմակ գյուղ, ապա Ախջալարով դեպի դիրքերը, ուր գունդը հասավ առավոտյան ժամը 6-ին (սովորական խառնաշփոթից և ընդունված թափառումներից հետո) և փոխարինեց ելիսավետապոլցիներին⁴, որոնք, չգիտես թե ինչու, բոլոր միջոցների դիմեցին, որպեսզի նոր ժամանածներին իրավիճակը ներկայացնեն սարսափելի տեսքով: Ասում էին, որ ցերեկները չի կարելի գլուխները բարձրացնել խրամատներից, քանի որ թուրքերը 800 քայլից անվրեպ են կրակում:

2-րդ գումարտակը դիրքավորվեց Կարավալադ գյուղի առջևում, և հունվարի 16-ի լուսաբացին հանդգնեցին, որ ելիսավետապոլցիների նախագգուշացումները չափազանցված էին: Ճիշտ է, թուրքերը կրակում էին, սակայն հազվադեպ և ողջ օրվա ընթացքում ոչ մեկին չխցեցին: Հունվարի 17-ի առավոտյան նույնիսկ այնպիսի բարեկամական հարաբերություններ են հաստատվում, որ թուրքերը և մենք բացարձակապես միմյանց վրա չէինք կրակում, չնայած մերոնց ու թուրքերին ոչ մեծ տարածություն էր բաժանում:

Հունվարի 17-ին 7-րդ վաշտին հրամայվեց թուրքերից ազատել Ալի-Բագիրկան ու Սիգիուլի գյուղերը, սակայն դրանք չգրավել, այլ զբաղեցնել այդ բնակավայրերի մոտ գտնվող բարձունքները: Այդ առաջադրանքը կարգադրվեց կատարել գիշերը, ընդ որում ձախ թևը ապահովելու համար այդ վաշտի հետ միաժամանակ գործելու էր 8-րդ վաշտը: Առաջադրանքի կատարումը սկսեցին գիշերվա ժամը 3-ին: Առաջադրանքը կատարվեց. 7-րդ և 8-րդ վաշտերը վերացրին իրենց հարձակման ճակատում գտնվող թուրքական բոլոր պահակակետերը: Ասկյարների մի մասը սվինահարվեց, մի մասը գերվեց, իսկ մեծամասնությունը փախուստի դիմեց: Չնայած առաջապահ զորամասերը առաջ էին անցել, սակայն ստիպված էին վերադառնալ և դիրքավորվել դեպի հակառակորդն ուղղված լանջին: Մինչև առավոտ վաշտերը տեղակայվեցին դիրքերում և ձևե ոչ մեծ խրամատներ սարքեցին:

Հունվարի 18-ի առավոտից սկսվեց փոխհրաձգություն մեր վաշտերի և թուրքերի միջև: Թուրքերը գտնվում էին լավ հարմարեցված դիրքերում՝ մեր գրաված դիրքերից ոչ հեռու: Վաշտերի դիրքերը գնդակոծման տակ էին, որի պատճառով նրանք զգալի կորուստներ կրեցին. կարճ ժամանակում սպանվեց 10 և վիրավորվեց 20 հոգի: Վիրավորվեց գնդացրային ստորաբաժանման սպա Տալաբուզիևը և զենքի պատասխանատու, կոլեգիալ ռեգիստրատոր⁵ Դյատկովը: Բոլորը հիմնավորապես տանջվեցին՝ գիշերը հաղթահարելով ժայռերն ու ձյունակույտները, իսկ ողջ օրը ստպված էին սառնամանիքի պայմաններում պառկած մնալ ձյան մեջ: Հունվարի 18-ի երեկոյան գումարտակի հրամանատարի

4 Նկատի ունի Ելիսավետապոլյան 156-րդ հետևակային գունդը:

5 Քաղաքացիական աստիճանավոր, որի պաշտոնը՝ հավասարագոր էր ենթասպայի աստիճանին:

հրամանով նահանջեցին հին դիրքերը: Այդպես էլ անհասկանալի մնաց, թե ինչ նպատակ էր հետապնդում այդ դիրքերի գրավումը, որոնք հարմար չէին, և բացի այդ ունեցանք անհմաստ մեծ կորուստներ:

Հունվարի 19-ի երեկոյան 3-րդ գումարտակը փոխարինեց երկրորդին և նահանջեց Ախջալար, որտեղից 4-րդ և 7-րդ վաշտերը ուղարկվեցին Չաթիլջա՝ հատուկ հանձնարարություն կատարելու համար: Այդ վաշտերը Չաթիլջա եկան ցերեկը ժամը 12-ին: 7-րդ վաշտի հրամանատարն անմիջապես կատարեց տեղանքի ուժեղ հետախուզություն պահակային պահպանության համար: Այդտեղ էր գտնվում կազակների հարյուրյակը: Ենթադրվում էր, որ ջոկատը գտնվելու է Չաթիլջայում՝ 1-ին կորպուսի ձախ թևը Մամուն-Կամի-Թեգիկսան կողմից դեպի Բասենի հովիտը պաշտպանելու համար, սակայն այդ ենթադրությունը սխալ էր:

Հունվարի 22-ի առավոտյան եսաուլ Օզարվսկուն հրամայվեց 2 վաշտից և կազակներից կազմված ջոկատով առաջանալ դեպի Մումուն-Կամի՝ գեներալ Չիկովանիի ջոկատի հետ կապ հաստատելու համար: Այդ ջոկատը մեծ դժվարությամբ հասավ Մումուն-Կամիից 3 վերստ հեռավորության վրա գտնվող լեռնանցքին, որտեղ նրա վրա կրակ բացեցին: Արդեն երեկոյան ժամը 5-ի մոտերքն էր, մեկ ժամ անց մթնելու էր: Իջնել գյուղ՝ չպարզելով հակառակորդի ուժերը, իմաստ չունենալով, մնալ լեռնանցքում մինչև առավոտ, ապա շարունակել լուսաբացին առաջադրանքի կատարումը, նույնպես վտանգավոր էր. ջոկատում չկար հացի պաշար, վառելիքայտ, փամփուշտներ և այլ մթերքներ, իսկ մատակարարում ոչ մի դեպքում հնարավոր չէր սպասել: Չնայած հետևակի պետը (7-րդ վաշտի հրամանատարը) հրամայեց վաշտերին դիրքավորվել, այնուամենայնիվ ջոկատի պետ եսաուլ Օզարովսկին վճռեց վերադառնալ Չաթիլջա: Հրամանը կատարվեց: Ջոկատը Չաթիլջա եկավ գիշերը ժամը 4-ին: Այդ ընթացքում ջոկատը ծանր փորձությունների ենթարկվեց: Սպաները և շարքայինները բացարձակապես ուժասպառ էին եղել, և շատ էին հիվանդները: Երկրորդ անգամ դեպի Մումուն-Կամի առաջացումը ձեռնարկվեց հունվարի 25-ին, և այն ավելի հաջող և ավելի թեթև թվաց: Մումուն-Կամի գյուղը գրավվեց և կապ հաստատվեց գեներալ Չիկովանիի ջոկատի հետ: Մումուն-Կամիից 4-րդ և 7-րդ վաշտերը Չաթիլջա վերադարձան հունվարի 28-ին, իսկ Չաթիլջայից վաշտերն ուղարկվեցին ընդհանուր պահեստագոր:

Հունվարի 29-ին Կովկասյան 5-րդ հրաձգային գունդը մասնակցեց Էրզրումի վրա կատարված ընդհանուր հարձակմանը: Գունդը ուղարկվեց դեպի Պալանթեքենի լեռը: Գունդը ստիպված էր հաղթահարել մեծ բարձունքներ, որտեղ մոլեգնում էին ուժեղ քամիները և ձյունախառն մրրիկները: Ճանապարհը իրենից ներկայացնում էր մարդահասակ ձյունակույտեր: Մարդիկ սաստիկ տանջվում էին՝ հաղթահարելով տեղանքը: Բարեբախտաբար գնդի տնտեսական մասը ձիշտ էր կազմակերպված, և գունդը ժամանակին ստանում էր մթերք, իհարկե, անասելի ջանքերի շնորհիվ:

Առավել բարձր գագաթը, որը հաղթահարեց գունդը, 3027 մետր էր: Փետրվարի 2-ի լույս 3-ի գիշերը այդ գագաթին գիշերեց գունդը: Խճուղուց աջ և

ձախ կատարվում էր ցուցադրական հարձակում, որը երևում էր ցերեկը լեռնե-րից:

Հունվարի 30-ին՝ ուժեղ պայթյունից հետո, գրավվեց ամրոցի ֆորտերից⁶ մեկը: Դժվար չէր գուշակել, որ Էրզրումի օրերը հաշված են: Հունվարի 31-ի, փետրվարի 1-ի և 2-ի հրետանային պատրաստությունից հետո մեկը մյուսի հե-տևից գրավվեցին Էրզրումի ամրոցի ֆորտերը: Այսպիսով, մեր զորքերի ճնշման տակ գրավվեցին Կարա-Գյուրեկ, Թախթա, Չոբան-Դարա, Դալան-Գյոզ, Ուզուն Ահմեդ N 1, Կարուրգա, Օրթա-յուկ և Օրթա-յուկ-Իլ-Լյավեաի ֆորտերը:

Չնայած դաժան եղանակին, բարդ տեղանքին, պարենի անխուսափելի պա-կասությանը և արևմուտքից ու հարավից թուրքերին հասած օգնությանը՝ Կով-կասյան բանակի կոփված զորքերին հաջողվեց հնգօրյա անօրինակ գրոհից հե-տո գրավել Էրզրումը՝ թուրքական բանակի հենարանը Փոքր Ասիայում: Նրա անկումն անխուսափելի էր, սակայն այն, որ դա կարող էր այդպես արագ ավարտվել, մեզ համար անակնկալ էր:

Փետրվարի 2-ին թուրքերը վերջնականապես տեղի տվեցին, հրդեհեցին Էրզրումի մի մասը և սկսեցին նահանջել Էրզրումից արևմուտք: Փետրվարի 3-ին՝ առավոտյան ժամը 7-ին, մեր զորքերն արդեն Էրզրումում էին: Էրզրումի գրավման մասնակիցները դեռևս չէին հավատում, որ Էրզրումը գրավվել է տարվա այդ եղանակին, այդպես դյուրին և համեմատաբար ոչ մեծ կորուստնե-րով, երբ շրջակա տեղանքը սովորաբար անանցանելի է լինում: Դժվար է նկա-րագրել այն անմարդկային ջանքերը, որոնք գործադրվեցին այդ օպերացիայի ընթացքում մեր զորքերի կողմից: Մենք մեծ կորուստներ ունեցանք ցրտահա-րության հետևանքով: Ինձ այդ մասին պատմեց մասնակիցը՝ 5-րդ գնդի շտաբ-սպաներից մեկը⁷: Իմ դիվիզիայի գնդերում՝ 5-րդ և 6-րդն, դրանք [ցրտահար-վածները] համեմատաբար քիչ էին, քանի որ ավելի լավ էին մատակարարվել տաք հագուստով: Կուրանյան գնդում նրանք [ցրտահարվածները] մոտ 1 ½ հա-զար էին:

Էրզրումում և ֆորտերում թուրքերը թողել էին մեծ թվով թնդանոթներ, հրացաններ, արկեր, փամփուշտներ և վառող: Էրզրումում մեր զորամասերը գտան լավ շինություններ, մեծ քանակությամբ պարեն, անասուններ և այլն: Քա-ղաքում մնացել էին շատ բնակիչներ, հիմնականում թուրքեր: Հայերը և հույները թվով քիչ էին:

Գործող բանակում գտնվող Կովկասյան 6-րդ հետևակային գունդը մար-տական գործողություններին անմիջականորեն մասնակցություն չունեցավ: Էկ-բատ գյուղ գալուց հետո մինչև հունվարի 22-ը գտնվել էր բանակային պահես-տագորում: Այստեղ գնդի հրամանատարը [գնդապետ Մովսես Սիլիկյան] կարո-ղացավ կենտրոնացնել գումակը, լրացնել իր բոլոր պաշարները, որոշ չափով նույնիսկ թարմացնել մարդկանց հանդերձանքը և կոշիկները: Այդ ընթացքում

6 **Ֆորտ** (լատ. fortis - «ամուր, ուժեղ») - փակ կամ բաց դաշտային ռազմական ամրություն, որը մտնում է ամրոցա-յին պաշտպանության ընդհանուր համակարգի մեջ և պաշտպանում է նրա մատույցները: Կարող է լինել ֆորտե-րի միասնական համակարգ:

7 Սպայական բարձր աստիճան ռուսական բանակում և նավատորմում մինչև 1917 թ.:

մարդիկ կերակրվեցին, զգեստավորվեցին և հանգստացան Ալաշկերտի հովտից Բասեն կատարված արագընթաց երթից հետո:

Հունվարի 23-ին բանակային պահեստազորի պետը տվեց հետևյալ հրամանը.

«66-րդ դիվիզիայի N 12 հրաման, Հասան Կալա, 1916 թ. հունվարի 23, 2 վերստանոց քարտեզ:

I. Վերջին մարտերում ջախջախված թուրքական III բանակը նահանջել է դեպի Էրզրումյան ֆորտերը՝ X կորպուսը գտնվում է Կարայյուբեկի շրջանում, XI կորպուսը զբաղեցնում է Դեվերոյնուի շրջանի դիրքերը Կագա Բագարից մինչև խճուղին, XI կորպուսի զորամասերը գտնվում են խճուղուց հարավ: Բացի այդ Դեվերոյնուի շրջանի դիրքերում գտնվում են Բաղդադյան հավաքական սահմանապահ կորպուսի և 108-րդ գնդի և երեք ժանդարմական գումարտակների մնացորդները:

II. Հակառակորդի հետ անմիջական մոտիկությամբ տեղակայված են մեր բանակի զորամասերը.

Թուրքեստանյան 2-րդ կորպուսը գտնվում է Սևրիչայի ուղղությամբ՝ իր առաջավոր զորամասերով գրավելով Կարագյուբեկի տակ գտնվող գերիշխող խրամատները:

Գեներալ Վորոբյովի զորայունը (Կովկասյան 4-րդ հրաձգային դիվիզիա) գտնվում է Այ-Քուրդ-Փորսուդ-Գերվանք-Գնիս-Մեջելդա շրջանում:

Կովկասյան 1-ին բանակային կորպուսը (39-րդ դիվիզիա, Կովկասյան 5-րդ հրաձգային գունդ, Գունիբյան 263-րդ հետևակային գունդ և երկու աշխարհագրային բրիգադներ հրետանու հետ) գտնվում է Հասան Կալե-Սես-Ալի Բագիրգան-Սիգիրլի շրջանում՝ ունենալով պահակային պահպանություն հետևյալ գծով՝ Մալա-օղլի լեռան ստորոտը, Չիֆթլիքով, Պուսի-Դերեից արևելք գտնվող ձորակը, Ալի-Բագիրգան, Սիգիրլի Գյուլլի-թափա լեռան գագաթը:

Գեներալ Չիկովանիի զորայունը, որը կազմված է 6 ½ դրուժինայից, հրետանիով և հեծելազորով հարձակվում է Կյուլլիով դեպի Դերիլեր և Պալանտեկեն:

Կովկասյան 4-րդ բանակային կորպուսը գրավել [է] Խնուս-կալեն [Խնուս]:

III. Իմ ենթակայության տակ գտնվող դիվիզիան, որը կազմված է Ախուլ-գինյան 261-րդ հետևակային, Գրոզնիի 262-րդ հետևակային, Գեորգիևսկյան 264-րդ [հետևակային], Կովկասյան 6-րդ հրաձգային (երեք գումարտակ) գնդերից, Կովկասյան 3-րդ առանձին հրետանային դիվիզիոններից, Կիլյարա-Գրեբենսկյան 3-րդ կազակային գնդի 2 հարյուրյակներից, կազմելով բանակային պահեստազորը, տեղակայված են.

1. Գրեբենցիների դիվիզան և դիվիզիայի շտաբը՝ Հասան-Կալա քաղաքում:
2. Ախուլգինյան 261-րդ հետևակային գունդը՝ Ուսումի-Մնադուլ գյուղերում:
3. Գրոզնիի 262-րդ հետևակային գունդը և Կովկասյան 3-րդ առանձին հրետանային դիվիզիոնը՝ Էսպենջե - Թանիշման գյուղերի շրջանում:

4. Գեորգիևսկյան 264-րդ գունդը՝ Թիմար-Սանսուր և Սիրբազան գյուղերի շրջանում:

5. Կովկասյան 6-րդ հրաձգային գունդը և Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիոնը՝ Էկբատ գյուղում:

66-րդ հրետանային բրիգադի զինամթերքի շարժապահեստը գտնվում է Պադիժվան գյուղում:

Հրետանային պահեստը՝ Հասան-կալեում:

66-րդ հետևակային դիվիզիայի 1-ին լազարեթը՝ Ազապքոյ գյուղում:

66-րդ հետևակային դիվիզիայի 2-րդ լազարեթը՝ Քյոփրիքոյում:

Վիրակապան և ախտահանման ջոկատը՝ դիվիզիայի շտաբին կից:

Դիվիզիայի գումակը մատակարարումը իրականացնում է Կարաուրգանից մինչև Քյոփրիքոյ:

Պարենի պահեստները՝ Խոպիկում, Օմրակոմում և Քյոփրիքոյում:

Գնդերի և դիվիզիայի շտաբները ապահովված են հեռախոսակապով:

Թռուցիկ փոստի կետերը տեղակայված են Հասան-Կալեում, Յագանում, Ազապքոյում, Սոնամերում և Կարաուրգանում:

Շտապ զեկույցներն ուղարկել երեկոյան ժամը 7-ի մոտերքը:

Բանակային պահեստագործի երկրորդ խումբը կազմված է Դոնյան հետևակ բրիգադից՝ հրետանիով և տեղակայված է Շերբազանի շրջանում:

Իսկականը ստորագրել է՝ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Սավիցկին»:

Հունվարի 24-ին 6-րդ գունդը մոտեցրին Հասանկալեին, որտեղ նշանակվեց առաջին կորպուսի պահեստագործում, փոխարինելով Դերբենդյան գնդին, որը Ելիզավետպոլյան գնդի անհաջող մարտից հետո պահեստագործից բերվել էր առաջնագիծ:

Հունվարի 30-ին գունդը դեռ գտնվում էր պահեստագործում Գելջիս, Կարուրգա, Ուզուն-Ահմեդ ֆորտերի հետևում՝ կատարելով պահակային ծառայություն:

Փետրվարի 2-ի լույս 3-ի գիշերը ժամը 3-ին գունդը մտավ Էրզրում: Հաջորդ օրը 6-րդ գնդին և մասնավորապես նրա հրամանատար, գնդապետ Սիլիկովին հանձնարարվեց հետևյալ առաջադրանքը՝ հայտարարվեց հրաման, ըստ որի գնդապետ Սիլիկովը նշանակվում է Էրզրում քաղաքի պարետ:

Գունդը գրավեց քաղաքը: Սկսում են մարել հրդեհները, կարգի բերել, բռնել դասալիքներին, դիակապտողներին և ստանձնում են բոլոր հրետանային ու համբարակային պահեստների հսկողությունը: Հայկական գլխավոր եկեղեցին⁸ լցված էր հայերին պատկանող գույքով: Գնդապետ Սիլիկովը այդ մասին հեռագիր է ուղարկում Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսյանին, որպեսզի նա վստահելի անձ ուղարկի այդ գույքն ընդունելու համար:

8 Սուրբ Աստվածածին:

Գնդապետ Միլիկովը Կովկասյան 1-ին կորպուսի հրամանատար [գեներալ] Կալեդինից հրաման ստացավ՝ չթույլատրել հայերի մուտքը Էրզրում:

Ինչպես արդեն նշել էի, փետրվարի սկզբներին գրավվեց Մուշ քաղաքը և Էրզրումը: Իհարկե, Մուշի գրավումը պետք է աննկատ անցներ, քանի որ գրավվել էր Էրզրումը, որը թուրքերի մոտ համարվում էր ամենաուժեղ ամրությունը: Այն ամրացված էր և սպառազինված ռազմագիտության ամենավերջին կանոններով և համարվում էր առաջնակարգ ամրոց հատկապես ձմեռային պայմաններում, երբ շրջակա տարածքը ծածկված էր անանցանելի ձյունով, ուժեղ սառնամանիքների և սուղաճնոց ձյունաբուքների և քամիների պայամաններում, որոնք առաջացնում էին անանցանելի ձնակույտեր: Եվ չնայած այդ ամենին, կովկասյան զորքերը, հաղթահարելով գերմարդկային դժվարությունները, համեմատաբար կարճ ժամանակում գրավեցին այդ անմատչելի ամրոցը: Մեզ լուրեր հասան, որ Էրզրումի գրավման ժամանակ գերվել են շատ սպաներ, ասկյարներ, տարբեր տրամաչափի 249 թնդանոթներ և 5 դրոշակներ⁹:

Այսպիսով՝ 1916 թ. փետրվարի 3-ը ընդմիջտ կմնա որպես հիշատակելի օր ռուսական բանակի տարեգրություններում՝ ընդհանրապես և Կովկասյան բանակի՝ մասնավորապես:

Էրզրումի գրավման առիթով փոխարքան հետևյալ հեռագիրն ուղարկեց Տեր Կայսրին. «Տեր Աստուածը ցոյց տուեց կովկասեան էլ աւելի քաջարի գօրքերին այնպիսի մեծ օգնութիւն, որ Էրզրումը, հնգօրեայ անօրինակ գրոհից յետոյ, առնվեց: Անչափ բաղդաւոր եմ հաղորդել այս յաղթութեան մասին Ձերդ Կայսերական Մեծութեան: **ՆԻԿՈՒԼԱՅ**»:

Այս հեռագրին ի պատասխան ստացվեց պատասխան. «Շնորհատրում եմ Ձերդ Կայսերական Բարձրութեան և Կովկասեան գօրքին Էրզրումը վերցնելու առիթով: Խնդրում եմ հաղորդել դիւցազն գօրքերին իմ ջերմ շնորհակալութիւնը նրանց հերոսական քաջագործութեան և այն ուրախութեան համար, որ պատճառեցին նրանք Ռուսաստանին թիրքական անմատչելի բերդի վրա գրոհ տալով: **ՆԻԿՈՒԼԱՅ**»¹⁰:

Երրորդ անգամ էր, որ Էրզրումը գտնվում էր ռուսների ձեռքին՝ 1828-ին¹¹, 1877-ին¹² և վերջապես 1916 թ.: Իսկ Մուշում մեր զորքերը հայտնվեցին առաջին անգամ:

Մուշում մնացել էին շուրջ 50 ընտանիքներ, որոնց թվում կային պատահաբար ողջ մնացած փոքրաթիվ հայեր: Ողջ հայ բնակչությունը կոտորվել էր 1915 թ. հունիսին¹³, չէին խնայել ո՛չ կանանաց, ո՛չ էլ երեխաներին: Ողջ էին թողել

9 Էրզրումի գրոհի ժամանակ Կովկասյան բանակը գրավել էր տարբեր տրամաչափի 450-ից ավելի թնդանոթ (այլ աղբյուրների համաձայն՝ 315), այսինքն՝ ողջ ամրոցային հրետանին և դաշտային հրետանու զգալի մասը, 300-ից ավելի սպաներ, 20 հազարից ավելի զինվորներ, կանոնավոր բանակի 9 դրոշներ, քրդական համիրեական զընդերի 3 դրոշակներ, և այլն, տես **Михайлов В. В.**, Разгром турецкой армии и овладение первоклассной крепостью. Эрзерумская операция 1915-1916 гг., «Военно-исторический журнал», Москва, 2006, N 8, с. 52.

10 Մեջբերումներն արված են ըստ՝ «Մշակ», Թիֆլիս, 5 փետրվարի 1916, N 26:

11 Նկատի ունի 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

12 Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

13 1915 թ. մայիսին Մուշ քաղաքի բնակիչներին հրամայել էին երկու ժամվա ընթացքում բռնագաղթել, սակայն հայերը հրաժարվեցին և Հակոբ Կոտոյանի (1864-1915) գլխավորությամբ կազմակերպեցին քաղաքի հինգ հայկական թաղա-

միայն անհրաժեշտ արհեստավորներին: Քաղաքում մթերքի պաշարները քիչ էին: Հավանաբար ամեն ինչ վաղօրոք տարվել էր: Համաձայն գործակալական տվյալների՝ հակառակորդը հեռացել էր դեպի Դիարբեքիր: Մեծ թվով ընտանի կենդանիներ էին թողնվել բնակիչների կողմից: Անասունները, մնալով առանց հսկողության և կերի, սատկում էին: Մուշում, հատկապես քաղաքի հայկական մասում մեծ քանակությամբ մնացել էին տեղական գորգեր, պղնձյա ամանեղեն և ծխախոտ: Քաղաքի այդ [հայկական] մասում տների գրեթե մեծ մասը կիսաքանդ էր, իսկ փողոցներում, այդ տների մոտակայքում ընկած էր կարմիր պղնձյա ամանեղեն: Այս ամանեղենը Փոքր Ասիայում համարվում էր բնակիչների նյութապես ապահով լինելու չափանիշ:

Ես այդ մասին զեկուցեցի կորպուսի հրամանատարին: Նրանից ստացվեց հետևյալ հրամանը՝ անասունները մորթել և սառեցնել (սառնամանիքներն այդ ժամանակ գրեթե դադարել էին, իսկ ցերեկը ձյունը արագ հալչում էր), իսկ գրաստները առանձնացնել և կերակրել (կեր ընդհանրապես չկար):

Ես կարգադրեցի գնդերում հավաքել 300-ական անասունների նախիրներ, իսկ մարտկոցներում, շարժապահեստներում և տարբեր հաստատություններում՝ 100-ական և դրանցից առանձնացնել գրաստները ու պահպանել: Իմ համբարակին հրամայեցի փորձի համար մորթել անասունների մի մասը և ծածկել ձյան հաստ շերտով: Ինչպես ես ենթադրում էի, այդպես էլ տեղի ունեցավ: Մի քանի օր անց այդ մսեղիքը սկսեց փտել և սարսափելի գարշահոտություն տարածել: Ես, իհարկե, այդ մասին զեկուցեցի կորպուսի հրամանատարին:

Մեր կորպուսային համբարակային ծառայությունը չէր շտապում մեզ պարեն մատակարարել: Բացի մսից, մնացած ամեն ինչում սարսափելի կարիք կար, քանի որ բնակիչները, գլխավորապես չերքեզները, լքելով իրենց գյուղերը մինչև մեր գալը, գրեթե ամեն ինչ տարել էին՝ թողնելով որոշ քանակությամբ ամանեղեն, հիմնականում կավից, և հարդ:

Փետրվարի 6-ին հրաման ստացա ուղարկել առաջապահ, իսկ առաջապահից Մշո դաշտ՝ երեք զորատեսակներից կազմված ջոկատ, ինչպես նաև Կյում-կյում-վադիկից¹⁴ դեպի արևմուտք գումարտակ 2 թնդանոթներով և կազակների մեկ հարյուրյակով Կարգա-Բագարի ուղղությամբ, ուր նահանջել էր հակառակորդը, կենտրոնացնել մեկ գունդ, իսկ մյուսը 4 թնդանոթներով՝ Կյում-կյում-վադիկի և Չարբորխի շրջանում: Չարբորխից¹⁵ 8-րդ գունդը շարասյուններով մտավ Մուշ: 8-րդ գնդի հրամանատար Չալլինսկին հիվանդ լինելու վերաբերյալ զեկուցագիր ներկայացրեց: Նա ողջ ժամանակ մտածում էր, որպեսզի մար-

մասերի ինքնապաշտպանությունը: Մուշի 12 հազար բնակչությանը ավելացել էին շրջակա գյուղերից ապաստանած շուրջ 10 հազար հայեր: Ուժերն անհավասար էին, հայերին չէին բավականացնում զենքն ու զինամթերքը, բացի այդ նրանք ստիպված էին մարտնչել թուրքական շուրջ 2 հազար կանոնավոր բանակի զինվորների, 11 թնդանոթների և քրդական ելուզակախմբերի դեմ: Մարտերը շարունակվեցին մինչև հունիսի 30-ը: Թուրք-քրդական ուժերը,

ներխուժելով հայկական թաղամասերը, կոտորեցին բնակչության մեծ մասին:

14 **Կյումգյում** - Վարդոյի գավառի կենտրոնը:

15 **Չարբորխի կամ Չարբուհար** - գյուղ Վարդոյի գավառում:

տերին մասնակցելուց հետո գնա թիկունք: Այդպես էլ արեց: Նրան բուժզննումից հետո տարհանեցին թիկունք, և այլևս չվերադարձավ:

Գնդի ժամանակավոր հրամանատարությունը ստանձնեց այդ նույն գնդի շտաբ սպա, Գլխավոր շտաբի ակադեմիան 2-րդ կարգով ավարտած և կադետական կորպուսի դաստիարակ գնդապետ Գոլուբյատնիկովը, որը բավականին փափուկ և կիսազինվորական անձնավորություն էր:

Իմ հրամանի համաձայն՝ թափառող անասուններից պահուստ կազմելու մասին վիրակապման ջոկատի ավագ սպան 7 հեծյալներից խումբ ուղարկեց վերը նշվածը կատարելու համար: Քրդերը՝ թվով 20 հոգի, կազմակերպեցին դարան և նրանց վրա կրակ բացեցին: 7-ից երեք հոգի սպանվեց: Այդ ժամանակ ես հրամայեցի կազմել պատժիչ ջոկատ՝ ոչնչացնելու համար այն գյուղը, որտեղ կազմակերպվել էր դարանը: Նմանապես կարգադրեցի մաքրել ճանապարհները ձյունից և Մուշ տանող ճանապարհի վրա կառուցել կամուրջներ:

Փետրվարի 8-ին Մուշից համանուն հովտով դեպի Բիթլիս հրամայեցի ուղարկել հետևակի գումարտակ և կազակային հարյուրյակ 2 թնդանոթներով, քանի որ քրդերը այդ շրջանում վայրագություններ էին կատարում: Կյում-կյում-վաղիկից դեպի արևմուտք ուղարկված ջոկատը իր առաջխաղացման ժամանակ հակառակորդին չհանդիպեց: Մեր ջոկատի մոտենալուց գյուղերի բնակիչները փախչում էին՝ իրենց հետ տանելով տան եղած-չեղածը: Լքված գյուղերում գտնում էին միայն չոր խոտ և հարդ:

Այդ օրը Մուշից բերեցին 40 ռազմագերի ասկյարների: Նրանց արտաքին տեսքը բավականին լավ էր: Նրանք բոլորն էլ Մուշի 3-րդ պահեստային գումարտակից էին: Նրանց հարցաքննությունը որևէ էական տեղեկություն չտվեց:

Մուշից ուղարկված ջոկատը հասավ մինչև Պատավանք գյուղը, որտեղ ընդհարում ունեցավ քրդերի հետ, որոնց քշեց ու ցրեց՝ պատճառելով մեծ կորուստներ:

Գիշերը կորպուսի հրամանատարից ստացա կարգադրություն փետրվարի 11-ին գեներալ Աբացիևին երեք զորատեսակներից կազմված օգնություն ուղարկելու մասին: Գեներալ Աբացիևը, Դատվանից առաջանալով դեպի Բիթլիս, հանդիպել է թուրքերի ուժեղ դիմադրությանը, որոնք իրենց թվաքանակով գերազանցում էին գեներալ Աբացիևի ջոկատին:

Ես հրամայեցի փետրվարի 11-ին օգնության ուղարկել գնդապետ Նոսկովի հրամանատարությամբ ջոկատը, որը կազմված էր Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի 3 գումարտակներից, 4 թնդանոթներից և լաբինցիների 2 հարյուրյակներից: Նույն օրը երեկոյան առաջապահը հասավ մինչև Հասքոյ գյուղը: Հեծելապարեկները փոխհրաձգություն էին ունեցել քրդերի հետ:

Ողջ օրը տեղում էր ձնախառն անձրև: Ճանապարհները այն աստիճան ջրացելստ էին դարձել, որ դժվարությամբ էին կարողանում առաջանալ: Մի քանի ժամվա ընթացքում գետերն ու գետակները այն աստիճան էին վարարել, որ դարձել էին անանցանելի: Դիվիզիայի համհարզը վերադառնալիս փոքր գետա-

կի գետանցման ժամանակ, որը երկու ժամ առաջ անարգել անցել էր, հազիվ էր փրկվել խեղդվելուց: Դժվարությամբ նրան փրկեցին:

Փետրվարի 11-ին գնդապետ Նոսկովի հրամանատարությամբ գլխավոր ուժերը՝ Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի երկու գումարտակները (1-ին և 2-րդ), 2 լեռնային թնդանոթներ, իսկ առաջապահը [լաբինցիների 2 հարյուրյակ] Խասքոյից Մշո դաշտով ուղղվեցին դեպի Բիթլիս:

Փետրվարի 12-ին ես, ձի հեծած, Չարբորխից մեկնեցի Մուշ: Ինձ հետ էին դիվիզիոնի բժիշկ Պանկևիչը, պրապորշչիկ Մեդվեդևը և մի քանի հանձնակատարներ: Ճանապարհը բավականին լավն էր: Դժվարությունների հանդիպեցինք գետակների գետանցման ժամանակ: Սաքավի գյուղից սկսվում էր բավականին լավ խճուղի, որը բավականին հազվագյուտ էր Թուրքիայի համար: Սուլուկ [Սուլուխ] գյուղի մոտ կար Եփրատի վրա տաշած քարից կառուցված հնագույն կամուրջ: Կամուրջը, ինչ պես ընդունված էր Թուրքիայում [Արևմտյան Հայաստանում], սապատավոր էր, սակայն շատ նեղ: Եթե ձին ինչ-որ բանից խրտներ, ապա, իհարկե, վտանգ կար բավականին բարձրությունից հայտնվել Եփրատի մեջ: Կամուրջին չհասած՝ մենք հանդիպեցինք 2 հեծյալ հայերի, որոնք էրզրումից՝ Քեռիի դրուժինայից գալիս էին Մուշ՝ իրենց տները տեսնելու և որևէ բան տեղեկանալու իրենց ընտանիքների մասին: Ես նրանց հետ գրուցեցի և հարցրի իրենց դրուժինայի մղած մարտերի մասին: Անցնելով կամուրջը՝ ես ուշադրություն դարձրի կամրջի եզերքի քարերի կարմիր գույնի վրա (կամուրջը բազրիք չուներ): Նրանք [կամավորները] ինձ բացատրեցին, որ [1915 թ.] հուլիսին թուրքերն ու քրդերը այստեղ են քշել հայերին և հարկադրել են նետվել Եփրատը, իսկ ով որ հրամանը չէր կատարել, տեղնուտեղը գլուխները կտրել են և նետել գետը:

Մուշից մի քանի վերստ հեռավորության վրա գտնվում էր հոսափտալի մեծ շինությունը: Տեղն ընտրված էր՝ հիմք ընդունելով որպես սանիտարական տեսակետից հարմար վայր: Մուշը սանիտարական տեսակետից համարվում էր ոչ այնքան բարվոք: Ինձ դիմավորեց Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Եգուպովը:

Քաղաքը բավականին մեծ էր, գտնվում էր լեռան լանջին: Ամենուրեք ավերումների և աղբի հետքեր էին: Հատկապես տուժել էր Մուշի հայկական մասը: Մուշը բացառապես բնակեցված էր հայերով: Կային զգալի քանակությամբ 2 և 3 հարկանի տներ: Շինությունները չթրծված աղյուսից էին և հիմնականախքով: Տանիքները տափակ էին: Այդպիսի տները մեծ խնամք էին պահանջում և ամենամյա վերանորոգում: Քանի որ տների մեծ մասը չէին վերանորոգվել, ուստի սկսել էին քանդվել: Փողոցները նեղ էին ու սարսափելիորեն կեղտոտ: Տների կահավորանքը բավականին լավն էր, հիմնականում՝ գերմանական արտադրության: Քաղաքի շրջակայքը ամբողջությամբ ծածկված էր խաղողի այգիներով, և որոշ վայրերում երևում էին ամառանոցային ոչ մեծ շինություններ: Կային լավ գորանոցներ, որոնք գտնվում էին քաղաքի ծայրամասում, և նրանց մոտ՝ զինվորական պահեստներ:

Չնայած ես նախագգուշացրել էի գնդապետ Նոսկովին, քաղաքն այնուամենայնիվ կողոպտվեց: Հիմնականում թալանում էին կազակները և 2-րդ դրուժինայի հեծյալ հայերը, որոնց, հակառակ իմ հրամանին, գնդապետ Նոսկովը վերցրել էր իր հետ: Իսկ մինչ մեր գորքերի մտնելը քաղաքը կողոպտվել էր նահանջող թուրքերի և քրդերի կողմից:

Հունվարի 13-ին¹⁶ բոլորից շուտ ինձ մոտ եկան շեյխից, մի քանի մոլլաներից և պատվավոր քաղաքացիներից կազմված մահմեդականների ներկայացուցիչները: Նրանց վկայությամբ քաղաքում մնացել էին շուրջ 50 ընտանիքներ, որոնք բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ և վրդովված էին հուլիսի [1915 թ.] անմարդկային կոտորածից: Շեյխը ողջ ժամանակ ըմբոստանում և բարձրաձայն արտահայտվում էր այդ կոտորածի դեմ, որի համար, իհարկե, առաջացրել էր բարձրագույն դեկավարության թշնամանքը: Շեյխի այդ խոսքերը հաստատում էին բոլոր հայերը: Խոսում էին այն կողոպուտների մասին, որոնք կատարել են կազակները և հեծյալ հայերը քաղաք մտնելիս: Շեյխի երկու չափահաս որդիները սպանվել էին:

Թուրքերից հետո եկան հայերի ներկայացուցիչները, հիմնականում արհեստավորներ՝ դերձակ, փականագործ և կոշկակար: Նրանք՝ որպես ականատեսներ, հաղորդեցին այդ սարսափելի սպանդի մասին: Թուրքերը, հայերին քշելով, ստիպում էին խորը փոսեր փորել, ողջ-ողջ հայերին նետում էին այդ փոսերը, սպա ծածկում հողով:

Դրանից հետո ես գնացի դիտելու քաղաքը: Այցելեցի շեյխին: Հանգստացրի մահմեդականներին և թույլատրեցի վերադառնալ իրենց տները: Նրանց զգուշացրի՝ եթե նկատեն, որ նրանք տեղեկություններ են հաղորդում թուրքերին, սպա ամենադաժան միջոցների կդիմեն: Կարգավորեցի նրանց և հայերի հարաբերությունները:

Կեսօրին կորպուսից հրաման ստացա անհապաղ Բիթլիս ուղարկել 8-րդ գնդի վերջին գումարտակը: Ցանկանում էին Մուշում թողնել մեկ հարյուրյակ: Ես, իհարկե, դեմ էի, ուստի Մուշ բերեցի 7-րդ գնդի վաշտերը և հաջորդ օրը վաղ առավոտյան ուղարկեցի այդ գումարտակը:

Մուշում մոլեգնում էր բծավոր տիֆը, և արդեն բավականին զոհեր կային մեր երիտասարդ բժիշկների, հատկապես հայ, շրջանում: Գիշերը տխուր լուր ստացա իմ օգնականի՝ գեներալ [գնդապետ] Տրեդենսկու մահվան մասին:

Իմ զինվորական սպասավորը գեկուցեց, որ կազակները իրենց թալանած ոսկյա լիբանները վաճառում են մեր թղթադրամով՝ 3 և 5 ռուբլի արժեքով: Դա ինձ խիստ զայրացրեց, սակայն դրա դեմ ռչինչ հնարավոր չէ անել, քանի որ այդ ամենը կատարվում էր ծածուկ:

Փետրվարի 14-ին վերադարձա Չարբորիս: Ժամանելուց հետո տեղեկացա, որ Մշո դաշտով Բիթլիս գնալիս քրդերը գազանաբար սպանել են պորուչիկ Բարանցևիչին և նրա սպայակին: Դրա մեղքը ամբողջությամբ ընկած էր կորպուսի

16 Փետրվարի:

շտաբի պետի վրա: Պորուչիկ Բարանցևիչը նրան զեկուցել էր, որ միայնակ գնալ [Մշո] դաշտով շատ վտանգավոր է, քանի որ քողերը դարանակալում են միայնակ մարդկանց և առանց քաշվելու նրանց հետ հաշվեհարդար են տեսնում: Նա թույլտվություն խնդրեց գնալ հաջորդ օրը, 8-րդ գնդի գումարտակի հետ: Բարանցևիչը հեռախոսագիծ էր անցկացնում դեպի Բիթլիս, սակայն շտաբի պետը չլսեց նրա իրավացի փաստարկները և հրամայեց անմիջապես կատարել հրամանը:

Երբ գտնվում էի Մուշում, շտաբս-կապիտան Կրիմ-Շամխալովը ինձ զեկուցեց, որ իրեն հաջողվել է հայերի և թուրքերի շրջանում հարցում կատարելուց հետո կարևոր տեղեկություններ հավաքել հայերի և նրանց կոտորածի վերաբերյալ: Ես խնդրեցի այդ ամենը զեկուցագրի տեսքով ներկայացնել, որը և նա կատարեց: Նա այդ զեկուցագիրը ինձ հանձնեց Մուշից մեկնելուց առաջ: Տեղադրում եմ այդ զեկույցի պատճենը: Այդ զեկույցը ինձ մոտ պահպանվել էր այն քանի շնորհիվ, որ ես այլ փաստաթղթերի հետ բերել էի Թիֆլիս¹⁷:

Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պետին

N 63

14 փետրվարի 1916 թ.

Մուշ Զեկուցագիր

Տեղիս բնակիչներին՝ ինչպես մուսուլմանների, այնպես էլ փրկված հայերի, հարցուփորձ անելուց առաջին հաջողվեց պարզել, որ բոլորը պետք է ենթարկվեն իրենց տիրակալի կամքին: Դրանից հետո հայերը մտան թուրքական բանակի շարքերը, առանց որևէ զինվորական պատրաստականության: Միայն [1914 թ.] սեպտեմբերի կեսերին, երբ էր գումարում գերմանացի սպաները կատարում էին զորքերի ստուգատես, հայերից խլեցին զենքը, որը բացատրվեց մուսուլմանական տերությանը դավաճանելու մտավախությամբ: Դրանից հետո հայերին դարձրին բանվորներ, ընդգրկեցին գումակային և այլ օժանդակ զորատեսակներում, և միաժամանակ սկսվեց զորքերից հայերի զանգվածային դասավորությունը:

17 Կրիմ-Շամխալովի զեկուցագիրն առաջին անգամ հրատարակել է ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Եր., 1991, էջ 501-504: Մ. Գ. Ներսիսյանը զեկուցագրի պատճենը հայտնաբերել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվում: Տե՛ս Լեոյի ֆոնդ, ֆոնդ 1, ցուցակ 1, գ. 226, թ. 1-6: Կրիմ-Շամխալովի վերաբերյալ հաջողվեց որոշ տեղեկություններ գտնել: 1918 թ. ապրիլին արդեն փոխգնդապետ Կրիմ-Շամխալովը հանդիսացել է Հայկական կորպուսի շտաբի հետախուզական բաժնի պետը: Մայիսի 12-ին օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ թուրքերը նախապատրաստվում են հարձակվել Ալեքսանդրապոլի վրա: Այդ մասին զեկուցվում է քաղաքում գտնվող Կրիմ-Շամխալովին, որը վճռականորեն հերքում է տեղեկությունը: Ավելին, մայիսի 15-ի թուրքական հարձակումից և Ալեքսանդրապոլը գրավելուց հետո փոխգնդապետը հրաժարվում է լքել քաղաքը պատճառաբանելով, որ կինը հիվանդ է: Նման վերաբերմունքը որոշակի հարցեր է առաջացնում: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 101: Այս անձնավորության վերաբերյալ բացասական վերաբերմունք է հայտնում Խորհրդային Միության մարշալ Սեմյոն Բուդյոնինին, որին ձանձառում էր դեռևս ռուս-ավստրիական ռազմաճակատից: Տե՛ս С. М., Буденный, Прошедный путь, Москва, 1959, с. 13, 16, 21.

Հայերը կատարում էին զինվորական ծառայություն և բնամթերքով վճարում ռազմական հարկը, իմիջիայլոց, գորակոչվում էին բոլորն առանց բացառության՝ 20-ից 45 տարեկանները, իսկ հարկը տրվում էր ունեցած ողջ մթերքի պաշարի 1/3- չափով, իմիջիայլոց, այդ մեկ երրորդը վերցնում էին մի քանի անգամ:

Հակիրձ՝ Բիթլիսի վիլայեթի դրությունը և տեղի ունեցած իրադարձությունները պատերազմի սկզբից մինչև մեր օրերը. իմ կողմից շարադրվում են միայն այն փաստերը, որոնք թե՛ թուրքերի և թե՛ հայերի վկայություններում համընկնում են, որոնք հարցման են ենթարկվել տարբեր ժամանակներում և միմյանց հետ հարաբերության մեջ չեն եղել ըստ բնակության վայրի:

Սկսած սահմանադրությունից¹⁸ մինչև պատերազմի հայտարարությունը տեղի քրիստոնյա բնակչությունը ազատ շունչ քաշեց և ապրում էր մուսուլմաններին հավասար՝ օրենքի և իշխանությունների հովանավորության տակ: Ընդ որում անհրաժեշտ է կատարել վերապահում, որ հայերը [մուսուլման] բնակչության հետ լավ հարաբերություններ ունեին՝ հալածվելով բացառապես երկրամասի իշխանական ներկայացուցիչների կողմից:

1914 թ. հուլիսի 21-ից հայտարարվեց ռազմական դրություն, և սկսվեց գորահավաք: Թուրքական կառավարությունը գորահավաքի ողջ ծանրությունը դրեց քրիստոնյաների վրա: Բնակչությունը մեծ դժգոհությամբ է ընդունել գորահավաքը, ու թեև դեռ հայտնի չէր, պատերազմ կլինի՞ Ռուսաստանի դեմ, բայց ամեն ինչ դա էր ցույց տալիս, և ժողովուրդը երկյուղ էր հայտնում այդ պատերազմի ելքի առթիվ:

Տեղիս հայերը հեռագիր էին ուղարկել Կոստանդնուպոլիս՝ պատրիարքին¹⁹, որով խնդրվում էր նշել, թե Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում քրիստոնյաներն ինչպես վարվեն, որին պատրիարքը պատասխան էր տվել, որ սուլթանի հպատակները, անկախ դավանանքից, պետք է ենթարկվեն իրենց միապետի կամքին, որից հետո հայերը ստան թուրքական բանակի շարքերը, թեև ոչ մի ռազմական պատրաստություն չունեին: Այդ ամենն ավարտվեց նրանով, որ բնակչությունը կողոպտվում էր մինչև վերջ: Քրիստոնյաներին զինահարկման ենթարկելուց մեկ ամիս անց այդ նույն հարկմանը ենթարկվեց նաև երկրի մնացած ոչ քրիստոնյա բնակչությունը:

Վանի գրավումը կոտորած²⁰ սկսելու ազդանշան հանդիսացավ, ընդ որում Թուրքիայում լուրեր տարածվեցին, թե Վանը գրավել են հայերը, թե ռուսներն [ռուսահայերն] ու թուրքահայերը կռվում են ռուսական զորքերի շարքերում, և այդ պատճառով էլ քրիստոնյաներին պետք է ոչնչանել: Այդ լուրերը հայտնի չէ թե որտեղից էին բխում, բայց կարծում եմ, որ դրանց տարածման մեջ մեղավոր էր միմիայն կառավարությունը:

18 Նկատի ունի 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը, որը նպատակ ուներ վերականգնել 1876 թ. Սահմանադրությունը:

19 **Զավեն Տեր-Շիպյան** (Պաղատացի, 1868-1947), Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1913-1922):

20 Հայ բնակչության կոտորածները սկսվել էին դեռևս 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին:

Մուշում «Միություն և առաջադիմություն»²¹ կուսակցության ներկայացուցիչ Ռաշիդ բեկը՝ հետագայում գինվորական գաղտնի հետախուզության պետը, սկսված կոտորածի գործուն կազմակերպիչը հանդիսացավ, և երբ նրան միացան Ազո-Մուստա բեկը, Մահմուդ-կադի բեկը և հատուկ այդ նպատակով Վանից ժամանած Քյազըմ բեկը՝ Վանի ժանդարմական թաբուրի²² հրամանատարը, ամբողջ վիլայեթը բաժանվեց շրջանների, և յուրաքանչյուր քաղաքում սկսեցին գործել վերը նշված իշխանության ներկայացուցիչները՝ Մուշի մյութասարիֆ²³ Սերվեթ բեկի գլխավորությամբ:

Սովորաբար այսպես էր արվում. մեծ փոսեր էին փորվում, դեպի նրանց եզրերն էին քշվում կանայք երեխաների հետ, և մայրերին ստիպում էին երեխաներին հրել այդ փոսը, որից հետո փոսի մեջ մի քիչ հող էին լցնում, ապա կապկպված ամուսինների աչքի առաջ բռնաբարվում էին կանայք ու սպանվում, դրանից հետո սպանվում էին տղամարդիկ, դիակները լցնում էին գրեթե մինչև վերջ: Հաճախ քրիստոնյաներին քշում էին դեպի գետը և կամրջից նետում ջուրը, ընդ որում դուրս լողացողներին բռնում էին ու նորից նետում: Եփրատում և Մուշի մոտակա գետակներում հիմա կլինեն առնվազն 15 հազար դիակներ (ըստ հայերի վկայության):

Այս գազանության դեմ բողոքել էր տեղի մուսուլման հոգևորականությունը, ընդ որում քաղաքի իմամ շեյխ Ավիս Կադլերը անձամբ դիմել էր մյութասարիֆ Սերվեթ բեկին՝ վերջինիս խնդրելով հարգել Մուհամեդի օրենքը, որը թույլ է տալիս սպանել միայն գենք կրելու և դիմադրելու ընդունակ, այսինքն՝ 15-60 տարեկան արական սեռի անձանց, որին ի պատասխան ձերբակալվելու սպառնալիք էր ստացել և փողոցային հայիոյանքների արժանացել: Դրանից հետո քաղաքի հոգևորականության և աշխարհիկ իշխանությունների միջև թշնամանք սկսվեց, և հոգևորականությունը սկսեց իր մոտ թաքցնել հայերի՝ ենթարկվելով նահանգապետի և ոստիկանության կողմից իրականացված խուզարկությունների, տուգանքների և վիրավորանքների:

Հովանավորություն ընձեռողների թվում էին հետևյալ անձինք. 1. Մուշ քաղաքի իմամ շեյխ Ավիս Կադլերը, 2. շեյխ Աբդուլ Համիդը, 3. հարուստ և երևելի դեմքեր՝ Ջաֆար աղան եղբայրների՝ Նադիր խանի, Սիջար աղայի, Աբդուլ Հասանի, Հաջի Մուհամեդ աղայի և ազգականների՝ Յուսուֆ աղայի և Քերիմ աղայի հետ, 4. Ալի աղա Բայրադար-գաղե և 5. Հասան-Թադի օղլին. վերջինս քուրդ է Սասունի լեռների Բեզգի ցեղից, որտեղ նա ապրել է հայ ապստամբներ-

21 «Միություն և առաջադիմությունը» (İttihat ve Terakki) թուրքական ազգայնամուլ կուսակցություն էր, հիմնվել է 1889 թ.: Պատերազմի նախօրյակին երիտթուրքերը, հեղաշրջում կատարելով, գրավեցին իշխանությունը: Առաջին աշխարհամարտը նրանց կողմից օգտագործվեց Օսմանյան կայսրության հայ բնակչության ցեղասպանությունը կազմակերպելու և իրագործելու համար: Հետագայում նույն բախտին արժանացան ասորիները, արաբները և հույները:

22 Գումարտակի:

23 Գավառապետ:

րի²⁴ հետ և աշխատել է նրանց հետ ու նրանց օգտին՝ իբրև երախտիք այն օգնության համար, որին մի ժամանակ նրան ցույց էին տվել հայերը:

Վերը նշված բոլոր անձինք մինչև այժմ մնացել են քաղաքում, բացի իման շեյխ Կադիրից: Հայերի վկայությունների համաձայն՝ ողջ հոգևորականությունն ընդհանրապես, առանց բացառության պաշտպանել է նրանց: Հայ ընտանիքներից մի քանիսը, որոնք նահանգապետի կողմից այս կամ այն պատճառով խնայվել էին, յուրաքանչյուր այդպիսի ընտանիքներում մի թուրք էր բնակեցվում, որը հանդիսանում էր լիիրավ տերն ու տիրականը թե՛ մարդկանց և թե՛ գույքի:

Վերն ամբողջ շարադրվածը և կոտորածին առնչվողը վերաբերում է 1915 թ. ամռանը, երբ կոտորածը առանձնակի մոլեգնության հասավ ծածկագրով Կոստանդնուպոլսից ստացված հեռագրի հետևանքով, ուր այն թելադրվել էր Բեռլինից, որում հատկապես համընկնում են թե՛ թուրքերի և թե՛ հայերի վկայությունները: Այդ հեռագիրը վերացրեց մարդկային կերպարանքի վերջին գծերը փառիշտի կառավարությունից, և Հայաստանում վերակենդանացան սուլթան Աբդուլ Համիդի²⁵ ժամանակները: Նախձիրը մերթ հանդարտվում էր, մերթ նորից բռնկվում և չմարեց մինչև Մուշում թուրքերի մնալու վերջին օրերը: Կառավարության կամքի իրագործողներն էին հանդիսանում զորքերը, մասամբ նաև քրդերը, սակայն գլխավոր ղեկավարներն էին իմ կողմից վերը թվակած անձինք:

Կոտորածի երկրորդ պատճառն այն էր, որ ասկյարները և հայերը գենքով դասալքում էին, չնայած վերջինը ճիշտ չէ, և վերջապես այն, որ պատերազմը քրիստոնեական տերության հետ իրավունք էր տալիս նրանց (հայերին) ընդհանրապես ոչնչացնել:

Մուշում, գերմանական համայնքում կային գթության երեք քույրեր, որոնցից երկուսը ականատես էին եղել կոտորածին, բողոքել էին, բայց ապարդյուն, սակայն գրելու կամ հեռագրելու հնարավորություն նրանք չունեին, քանի որ նրանց ամբողջ նամակագրությունը գրաքննության էր ենթարկվում հենց իր՝ Սերվեթ բեկի կողմից, և այն ամենը, ինչ անցանկալի էր, ոչնչացվում էր: Այդ քույրերի ազգանուններն են՝ Բողիլ²⁶ (Նորվեգիայից) և Ալման²⁷ (Շվեյցարիայից²⁸): Մյու-

24 Հայդուկների:

25 Աբդուլ Համիդ II (1842-1918), Օսմանյան կայսրության սուլթան և խալիֆ (1876-1909): Հայկական կոտորածներ կազմակերպելու և իրականացնելու համար հայտնի է «Կարմիր սուլթան» անունով: 1894-1896 թթ. նրա իրամանով կոտորվել են շուրջ 300 հազար հայեր:

26 Բողիլ Բերն (Bodil Biørn, 1871-1960), նորվեգացի միսիոներուհի: 1905 թ. «Կին միսիոներուհիներ» կազմակերպության կողմից ուղարկվում է Օսմանյան կայսրություն: Համագործակցել է գերմանական միսիոներական առաքելության հետ: Սկզբնական շրջանում գործունեություն է ծավալում Մեզրեում (Խարբերդի նահանգ), ապա մեկնում է Մուշ: Հայոց ցեղասպանության ականատես: Պատերազմի ավարտից հետո գործունեություն է ծավալել Սիրիայում, Լիբանանում և Կ. Պոլսում: 1922 թ. Ալեքսանդրապոլում հիմնել է «Լուսաբոլոր» որբանոցը 33 որբերի համար:

27 Ալմա Յոհանսոն (Alma Viktoria Leontina Johansson, 1880-1974), շվեդ միսիոներուհի: 1910-1915 թթ. գտնվել է Մուշում գերմանական առաքելության կազմում աշխատելով հայ որբերի համար կազմակերպված գերմանական որբանոցում: Հայոց ցեղասպանության ականատես: Շվեդիայում հրատարակել է Հայոց ցեղասպանությանը նվիրված երկու գրքեր՝ Alma Johansson: Ett folk i landsflykt: Ett år ur armenienas historia, 1930 (faksimiluppplaga 1979), Alma Johansson: Armeniskt flyktlingliv, Kvinnliga Missions Arbetare, Stockholm, 1931.

28 Շվեդիայից:

թասարիֆի հրամանով երկուսն էլ տարվել էին Խարբերդ, ուր մեկնել էր Սերվեթ բեկը (այնտեղ էլ մեռել էր): Սերվեթ բեկից հետո նահանգապետն էր Սաքվաթ բեկը (Կյում-կյում-վադիկից), որը մի տարի առաջ մեկնել էր Բիթլիս և այնուհետև Մոսուլ, իսկ վերջին ժամանակներս նահանգապետի տեղն ու պաշտոնը տնօրինում էր 34-րդ դիվիզիայի հրամանատար Վելս փաշան: Նրանք բոլորն էլ շարունակում էին Սերվեթ բեկի սկսած գործը: Երբ [ռուսների կողմից] գրավվեց Կարա Չոբանը (Կամա-Կարա-գյոզ), սկսվեց Մուշի տարահանումը, ընդ որում քաղաքի կառավարիչները հրամայեցին բոլոր բնակիչներին հեռանալ, իսկ Խնուսի անկումից հետո ձեռնարկվեցին բռնի միջոցներ, որոնք դրսևորվում էին նրանով, որ ոստիկանությունը փշրում էր այն տների լուսամուտներն ու ջարդում դռները, որոնց բնակիչները չէին ցանկանում ենթարկվել նահանգապետի հրամանին:

Քաղաքում թուրքերի գտնվելու վերջին պահերին հրկիզվել էին մահուդի, կոշիկի, հացահատիկի ու պարենի պահեստները, բայց այն հապշտապությունը, որով կատարվում էր փախուստը, հնարավորություն չէր տվել ոչնչացնել ամեն ինչ, ի դեպ, մոռացել էին հին հայկական վանքը, որը Սերվեթ բեկը բրնձի, օձառի ու կաշվի պահեստների էր վերածել: Վանքը ես գտա կողոպտված վիճակում, որը կատարել էին հարուստ քուրդ խան Հաջի Մուսա բեկի զինվորական գործին վարժեցված քրդերը, որի [Մուսա բեկի] կալվածքները գտնվում են Մուշից հարավ: Նրա 600 հեծյալները, մինչև մեր գործերի գալը, երկու օրվա ընթացքում [թուրքական] զորքերի կողմից լքված Մուշ քաղաքի բնակչությունից հավաքում էին բնամթերք և փող, իսկ նրանցից հետո տնօրինում էին մնացած բնակիչները և իրավիճակի մասին տեղեկացած շրջակա հայկական գյուղերի բնակիչները²⁹:

Փետրվարի 7-ին Ձերդ գերագանցության հրամանով ժամանելով Մուշ քաղաք՝ վերջինս գտա ահավոր վիճակում:

Ամեն ինչ վերածված էր տաշեղների կույտերի, ամանեղենի բեկորների, կտորների, բրդի ծվենների և այլն, բացարձակապես ամեն ինչ ջարդուփշուր է արված ու ապականված, ցավոք ես չեմ կարող համոզված լինել, որ քաղաքը գրաված զորքերը նույնպես դրան չեն մասնակցել:

Հայերի վկայության համաձայն՝ Մուշից հեռանալուց 4 օր առաջ սկսվել էր Բիթլիսի տարահանումը, ուստի չի կարելի հուսալ, որ քաղաքում պարենի պաշար կլինի, որտեղ մնացել են միայն զորքերը և հեռագրական պաշտոնյաները:

Ստորագրություն՝ շտաբս-կապիտան Կրիմ-Շամխալով:

Իսկականի հետ ձիշտ է՝ ավագ համհարզի պաշտոնակատար, շտաբս-կապիտան Վլադով»:

29 Միայն Մուշ քաղաքը չէր ենթարկվել կոտորածների, այլև դաշտավայրի հայկական բնակավայրերը: Իսկ այսպես կոչված «կողոպուտին» մասնակցածները ամենայն հավանականությամբ սպանողի փրկված հայերն էին:

1) Ծանոթություն՝ այդ քուրդը բավականին արժեքավոր անձնավորություն է³⁰ և նրա միջոցով կարելի է կազմակերպել գործակալական ցանց:

2) Այս գեկուցագրում ներկայացված փաստերը իմ Մուշ կատարած երկրորդ այցի ժամանակ ունեցած գրույցի ժամանակ հաստատվել են մի շարք անձանց կողմից, որոնց թվում է շեյխ Ջաֆար բեկը³¹ և ուրիշներ:

1916 թ. փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը գեներալ Աբացիևը փորձեց գրոհել Բիթլիսը, սակայն գրոհը չհաջողվեց, ուստի այն հետաձգվեց փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը:

Շրջակա գյուղերի բնակիչները անընդհատ բողոքում էին կազակների կողմից կատարվող կողոպուտների և սպանությունների դեմ:

Փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը գեներալ Աբացիևի նախաձեռնած Բիթլիսի գրոհը հաջողվեց: Բիթլիսը գրավվեց հանկարծակի: Լուրերի համաձայն՝ գրավվել էր 60 թնդանոթ, գերվել 200-ից ավելի ասկյարներ, գնդի մեկ հրամանատար և 15 սպա: Հրամայեցի այդ մասին հայտարարել Մուշի բնակիչներին և առաջարկել քրդերին հանձնել գեներալ և ենթարկվել: Կրկին բնակիչները եկան բողոքելու կազակներից: Հրամայեցի հետաքննել ու գեկուցել:

Բնակիչները (չերքեզները) մեր նկատմամբ մեծ վստահություն ունեին, մի քանի անգամ եկան մեկը մյուսից բողոքելու, ընդ որում, երբ նրանց մոտ թյուրիմացություններ էին առաջանում, ապա դիմում էին մեր միջնորդությանը: Ես այդ գործը հանձնարարել էի ավագ համհարզ, կապիտան Վեթիլովին³²: Նա սովորաբար հանդիսավոր կերպով էր քննում նման թյուրիմացությունները, սեղանը ծածկում էր կարմիր կտորով, երկու կողմից հրավիրում էր պատվավոր ներկայացուցիչների, և քննարկումից հետո ենթարկվում էին նրա վճռին: Նույնիսկ ստիպված էին լուծել ընտանեկան թյուրիմացությունները:

Նման վերաբերմունքի շնորհիվ շրջակա գյուղերի բնակիչները մեզ վստահությամբ էին վերաբերվում և հաճույքով մատակարարում էին պարեն, տարբեր մանր եղջերավոր կենդանիներ ու նույնիսկ ցորենի լավ ալյուրից պատրաստված լեռնականների չուրեկներ³³:

Իմ միջնորդության համաձայն՝ փետրվարի 19-ին հրաման ստացվեց գնդապետ Օբրագցովին ինձ մոտ Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի բրիգադի

30 Անհասկանալի է, թե ում ի նկատի ունի:

31 Մուշում գտնվող գյուղատնտես Աշոտ Աթանասյանը, որին գործուղել էր Համառոտաստանյան քաղաքների միության կովկասյան կոմիտեն տեղում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար, 1916 թ. հուլիսի 26-ին ներկայացրած հաշվետվությունում վկայակոչում է գեներալ Թովմաս Նազարբեկյանի գրույցը վերը նշված Ջաֆար աղայի հետ: Վերջինս հաստատեց և լրացրեց Կրիմ-Շամխալովի գեկուցագրում բերված փաստերը, տե՛ս **Սահակյան Ռուբեն**, Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2007, N 1-2, էջ 45:

32 **Վեթիլով Ալեքսանդր** (1883-?), գլխավոր շտաբի կապիտան, Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի ավագ համհարզ: Հայկական հրաձգային բրիգադի շտաբի պետի պաշտոնակատար (04.10.1917): Սպիտակ շարժման մասնակից՝ Չերքեզական հեծյալ դիվիզիայի շտաբի պետ: Հայկական բանակի շտաբի պետ, գնդապետ (1920):

33 Հացի տեսակ, որը թխում են Հյուսիսային Կովկասում՝ թոնրում կամ մոխրի մեջ:

հրամանատար նշանակելու մասին, նրա փոխարեն գնդի հրամանատար նշանակվեց իմ շտաբի պետ գնդապետ Պոլտավցևը:

Չարբորխում իմ գտնվելու ընթացքում 7-րդ գունդը աստիճանաբար բերվեց Մուշ:

1916 թ. փետրվարի 27-ին կորպուսից ստացված հրամանի համաձայն՝ ես հետևյալ հրամանը սվեցի ջոկատին.

«Հրաման
Գեներալ Նազարբեկովի ջոկատին
Քարտեզը թուրքական 1 դյույմում 5 վերստ և
ռուսական 1 դյույմում 10 վերստ:

N 8

27 փետրվարի 1916 թ., ցերեկը ժամը 4
գյուղ Չարբորխ

1) Զախջախված թուրքական բանակը նահանջում է Բաբերդի և Երզնկայի ուղղությամբ: Նրա վերջապահները կանգնած են Սպեր-Իչ-Քիլիսա-Աշկալ գծի վրա: Կան հավաստի տեղեկություններ, որ թուրքական կառավարության կողմից Կովկասյան ռազմաճակատ են ուղարկվում զգալի ուժեր, որոնք հավանաբար նախապես կկենտրոնացվեն Երզնկա-Խարբերդ-Դիարբեքի թևում: Կան տեղեկություններ, որ ենթադրվում է թուրքերի զգալի ուժերի կենտրոնացում նշված գծի վրա, որը կատարվում է ոչ միայն խոչընդոտելու մեր զորքերի հետագա առաջխաղացումը Անատոլիայի [Արևմտյան Հայաստանի] խորքը, նաև նպատակ ունեն հարձակման անցնելու, դուրս մղելու մեզ մեր գրաված շրջաններից և կրկին գրավելու Էրզրումը և Դևերոյնույի դիրքերը:

Արդեն կան տեղեկություններ Դիարբեքի մոտ թուրքական 5-րդ կորպուսի կենտրոնացման մասին: Բիթլիսը պաշտպանող թուրքական ջոկատի մնացորդները պարտությունից հետո նահանջել են Սղերդ:

Խնուսից հարավ ջախջախված 106-րդ և 107-րդ գնդերը նահանջել են Կյում-կյում-Վադիկից Կարգա-Բազարով դեպի հյուսիս-արևմուտք:

Գործակալական չստուգված տեղեկությունների համաձայն՝ հարավից՝ Մուշ-Բիթլիս ուղղությամբ առաջանում է Հալիլ բեյի կորպուսը:

2) Մեզանից աջ՝ Զիարեթ-Թափասի ճակատում (ներառյալ), տեղակայված է Կովկասյան 1-ին կորպուսը, որի ձախ կողային ջոկատին հրամայված է.

ա) Դիրքավորվել Դյուզ-յուրդի լեռից մինչև Ամարտաշ-թափա լեռը ներառյալ:

բ) Հետախուզել դեպի Մամախաթուն³⁴ և ձախում կապ պահպանել մեր կորպուսի զորամասերի հետ:

Մեզանից ձախ՝ Վանի շրջանում՝ Ուշնուե-Սոուջբուլաղ ձակատում, տեղակայված է Ադրբեջանա-Վանյան ջոկատը:

Բանակային պահեստազորը մարտակարգի երկայնաշարքով գտնվում է Հասան-կալա-Կարաուրդան-Սարիղամիշ գծով:

3) Պայծառափայլ Գլխավոր հրամանատարը հրամայել է տոկուն կերպով պաշտպանել Էրզրումը և մեր կողմից գրավված դիրքերը:

4) Մեր կորպուսին հրամայված է.

1) Առաջանալ Տիլիկի թափասի լեռան (սերառյալ)-Կյում-կյում-վադիկ-Չարբորխ-Վանա լճի արևմտյան ափը գծով:

2) Պաշտպանել Բիթլիսը և Մուշը՝ ամրանալով հարմարավետ դիրքերում:

3) Դիտարկել և ապահովել հարավից դեպի հյուսիս՝ դեպի Էրզրում, Բինգյուլ-դաղ, ա) դեպի Խնուս-կալե՝ Բինգյուլ-դաղից արևելք և գ) դեպի Կուփ ու Մանազկերտ տանող ճանապարհները:

4) Կատարել անընդմեջ խորքային հետախուզություն Խարբերդ-Դիարբեքիր և Սղերդ ուղղություններով: 5) Աջ թևով, Թուլքի-թափա լեռան մոտ, անմիջական կապի մեջ մտնել 1-ին կորպուսի զորամասերի հետ: 6) Դիտարկել Բինգյուլ-դաղը: 7) Պահպանության և հետախուզության սահմաններն են՝ հյուսիս-արևմուտքում Կովկասյան 1-ին կորպուսի հետ Կարա-Շեյխից, Շեյխ-Հասանից, Շորոկի լեռից, Զիարեթ-թափասի լեռից, Կարա-բաբա-դաղի լեռից դեպի հարավ-արևելք Ադրբեջանա-Վանի ջոկատի հետ-Վանա լճի հարավ-արևմտյան անկյունը – Սղերդը:

5) Գեներալ Յուրկևիչի ջոկատին, որը կազմված է աշխարհագրային 2 գումարտակներից, 66-րդ հրետանային բրիգադի 4 թնդանոթներից, Սունժենյան-Վլադիմիրյան 3-րդ կազակային գնդից և Կարսի ամրոցային 2-րդ վաշտից, հրամայում եմ.

1) Տեղակայվել Շեյխ-Հասան և Չիֆթլիկ գյուղերի շրջանում, ամրացնել Քղիից և Օղնուտից դեպի Էրզրում տանող դիրքերը, 2) հետախուզությունը կատարել՝ սահմանափակվելով հյուսիս-արևմուտքում Շեյխ-Հասան-Բաջրոյ-Քղի, իսկ հարավ-արևելքում՝ Չիֆթլիկ-Չիր-Կիրմոչեք-Գարին-Սիտի լեռնաշղթա գոտիով:

3) Ձախում կապ պահպանել գեներալ Աբացիևի ջոկատի, իսկ աջում՝ 1-ին կորպուսի ձախ կողմի ջոկատի հետ:

Գեներալ Աբացիևի ջոկատին, որը կազմված է Չեռնոմորյան 1-ին կազակային գնդից, Կիզլյարո-Գրեբենսկյան 3-րդ կազակային գնդից, Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի 1 գումարտակից և 2 գնդացիներից, Կովկասյան 6-րդ գնդի 1 գումարտակից և 2 գնդացիներից, աշխարհագրային 1-ին դրուժինայից,

34 Դերջան:

Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 1 մարտկոցից և Կարսի ամրոցային 2-րդ սակրավորական վաշտից, հրամայված է. 1) Հետևակը ուղղել Կարգա-Բազար Սելիկան-Սուրբ Կարապետ վանքը (Չինկի քիլիսա)-Ջիարեթ գիծը, հետախուզությունը կատարել՝ սահմանափակվելով հյուսիս-արևելքում պայմանական Կարգա-Բազար-Թով, Բեյուկ-սուի ձախ ափը և հարավ-արևելքում Եփրատ գետի գոտիով: Հետախուզական հարյուրյակներին պարտադիր հասնել մինչև Քղի-Չաշկ գիծը: 2) Հակառակորդի հարձակման դեպքում կանգնեցնել նրա առաջխաղացումը հետևակի տեղակայված դիրքերի գծի վրա: 3) Աջից կապ պահպանել գեներալ Յուրկևիչի, իսկ ձախից՝ գեներալ Նազարբեկովի ջոկատների հետ:

Գեներալ Նուկովի ջոկատին, որը կազմված է Լաբինսկյան 1-ին կազակային գնդից, Հայկական դրուժինայից և Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի 2 թնդանոթներից, հրամայում եմ.

1) Հետախուզել Մուշից դեպի Դիարբեքիր-Ֆարկան ճանապարհները՝ հասնելով մինչև Իլիջա-Հազրո-Ֆարկին գիծը: 2) Կորպուսի շտաբի հետ կապը պահպանել Մուշի ջոկատի պետի միջոցով: Գնդապետ Դոկուչանի հրամանատարության տակ գտնվող ընդհանուր պահեստագործին՝ Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի 3 գումարտակներին, Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 3 գումարտակներին, աշխարհագրայինների 2 վաշտերին, Կովկասյան 2-րդ հրաձգային-հրետանային դիվիզիոնի 3 մարտկոցներին, 66-րդ հրետանային բրիգադի 18 թնդանոթներին, Կուբանյան 1-ին և 5-րդ կազակային մարտկոցներին, Կովկասյան 2-րդ առանձին հաուբիցային մարտկոցին, Չեռնոմորյան 1-ին կազակային գնդի 3 հարյուրյակներին, Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական կիսավաշտին և Կարսի ամրոցային սակրավորական վաշտի կիսավաշտին հրամայված է. 1) Հետևակին, լեռնային թնդանոթներին և հեծելազորին տեղակայվել Չարբորխ-Կյում-կյում-վադիկ գյուղերի շրջանում և ամրացնել դիրքերը Բինգյուլ-դաղ-Կյում-կյում-վադիկ-Չարբորխ գյուղերի-Խայլա-թափասի լեռան ճակատը:

2) Դաշտային մարտկոցներին և Կուբանյան 1-ինին մնալ Սանջանում՝ 586-րդ դրուժինայի պաշտպանության տակ, Կուբանյան 5-րդ և հաուբիցային մարտկոցներին մնալ Հասանկալեյում:

4)³⁵ Իմ հրամանատարության տակ գտնվող ջոկատը, որը կազմված է Կովկասյան 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերից, 292-րդ և 534-րդ աշխարհագրային դրուժինաներից, Հայկական 1-ին դրուժինայից, Կովկասյան 2-րդ հրաձգային-հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի 4 թնդանոթներից, Կովկասյան 4-րդ հրաձգային-հրետանային դիվիզիոնի 3-րդ մարտկոցի 4 թնդանոթներից, 66-րդ հրետանային բրիգադի 2 թնդանոթներից, Սունժեյան-Վլադիկավկասյան կազակային 1-ին գնդի 3 հարյուրյակներից, Չեռնոմորյան կազակային 3-

35 Հերթական համարը խախտված է: Պետք է լինի 3-րդ:

րդ գնդի 3 հարյուրյակներից, Վոլգյան կազակային գնդի 1 հարյուրյակից և Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական վաշտի կիսավաշտից, հրամայված է. 1) Ամրացնել և համառորեն պաշտպանել Կոզմա-դաղ-Կուտիկ-դաղ լեռնաշղթաներով, Խաչարա-սույով անցնող Դիարբեքիից տանող և Եփրատի ձախ ափի երկայնքով ձգվող Խարբերդից ուղիները: 2) Ամրացնել և համառորեն պաշտպանել Բիթլիսյան կիրճերը և նրան շրջանցող ճանապարհները: Առանձնացնել երկու վաշտեր և Հայկական դրուժինան և նրանց տեղակայել Բիթլիս-Մախուբանկ-Մուշ և Քիլիջոս-Քիլոնք-Նոկ խաչմերուկների գյուղերում: Արգելել թշնամու առաջխաղացումը Կադիլջոսից Մշո դաշտ, որի համար համապատասխան դիրքեր գրավել Ջորիկ գետի աջ ափին: 3) Հետախուզությունը կատարել հետևյալ ուղղություններով՝ 1) դեպի Խարբերդ՝ Եփրատի աջ ափով և Գենջով դեպի Դիարբեքի և Պուպրին-կոմ, 2) դեպի Կադիլջոս և 3) Բիթլիսից դեպի հարավ-արևմուտք մինչև Ջոխ-Սղերդ գիծը, 4) Աջում կապ պահպանել գեներալ Աբացիևի ջոկատի, իսկ ձախում՝ Վանի ջոկատի հետ:

ա) Գնդապետ Նիկոլանի Մուշի ջոկատը.

Կովկասյան 7-րդ հրաձգային գունդ	4 գումարտակ
Կովկասյան 2-րդ հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի	4 լեռնային թնդանոթներ
Կովկասյան 2-րդ առանձին սակրավորական վաշտի	1 դասակ

Չեռնոմորյան 3-րդ կազակային գնդի 3 հարյուրյակ

Ընդամենը՝ 4 գումարտակ, 4 լեռնային թնդանոթ, 3 հարյուրյակ և սակրավորների 1 դասակ:

ա) Դիրքավորվել և հակառակորդի հարձակման դեպքում համառորեն պահպանել դիրքերը Կոզմա-դաղ, Կուրտիկ-դաղ լեռնաշղթաների լեռնանցքները և Խաչարա-սու տանող ճանապարհները, որոնք ձգվում են Եփրատի ձախ ափով՝ Խարբերդից և Դիարբեքիից: Հետախուզությունը կատարել դեպի Խարբերդ Եփրատի ձախ ափով և Գենջով ու Պուպարնա-կոմ դեպի Դիարբեքի: Կապ պահպանել գեներալ Աբացիևի ջոկատի հետ:

բ) Գնդապետ Օբրագցովի Բիթլիսյան ջոկատը.

Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի	4 գումարտակ
292-րդ և 594-րդ աշխարհազորային դրուժինաներ	2 գումարտակ
Հայկական 1-ին դրուժինա	1 գումարտակ
Կովկասյան 2-րդ հրաձգային-հրետանային դիվիզիոնի 1-ին մարտկոց	4 լեռնային թնդանոթ

Կովկասյան 4-րդ հրաձգային բրիգադի 3-րդ մարտկոցի 2 լեռնային թնդանոթ

Սունժենյան-Վլադիկավկազյան 1-ին կազակային գնդի 3 հարյուրյակ

Վոլգյան 3-րդ կազակային գնդի
Կովկասյան 2-րդ սակրավորական վաշտի
Ընդամենը՝ 7 գումարտակ, 6 լեռնային թնդանոթ, 4 հարյուրյակ, 1 դասակ:

1 հարյուրյակ
1 դասակ

բ) Դիրքավորվել և հակառակորդի հարձակման դեպքում համառորեն պաշտպանել Բիթլիսյան կիրճը և շրջանցիկ ճանապարհները:

Առանձնացնել երկու վաշտեր և Հայկական դրուժինան ու տեղակայել նրանց Բիթլիս-Մախուբանկ-Մուշ-Քիլիջոս-Քիլոնք-Նոկ խաչմերուկների գյուղերում: Արգելել թշնամու առաջխաղացումը Կադիլջուպից Մշո դաշտ, որի համար համապատասխան դիրքեր գրավել Ձորիկ գետի աջ ափին: Հետախուզությունը կատարել արևմուտք մինչև Ջոխ-Սղերդ և դեպի Կադիլջոս: Պահպանել կապ Վանի ջոկատի հետ:

7) Հրետանային շարժապահեստները գտնվում են մարտկոցներին կից:

8) Սանիտարական հաստատությունները և տրանսպորտը տեղաբաշխում է ջոկատի բժիշկը:

9) Եփրատի վրա կամուրջներ են կառուցվում Կարա-Աղջայի, Քոթլիի, Շեյխան-քյոփրեսիի-Ալի-Գեդիկի մոտ:

10) Կորպուսի ռազմական ճանապարհներն են՝ 1) Խնուս-Գյուլլի-Հասանկալա, 2) Խնուս-Գյուլլի-Չուլի-Էշակ-Էյլաս, Բաշքոյ-Կարակուրտ, 3) Խնուս-Դութախ-Ղարաքիլիսա-Նովոնիկոլակսկա, 4) Խնուս-Դութախ-Ղարաքիլիսա-Չինգիլի լեռնանցք-Իգդիր-Էջմիածին, 5) Խնուս-Չարքորխ-Մուշ, 6) Դութախ-Մանազկերտ-Լաթեր-Կարմուջ-Բիթլիս, 7) Նախկին Ոստանի ջոկատի համար՝ Բիթլիս-Սորպ-Վան:

11) Առաջավոր հրետանային պահեստները կազմակերպվում են՝ Դատվանում, Լյաթերում, Կյում-կյում-վադիկում, Խնուսում, Դութախում և Ղարաքիլիսայում:

12) Պարենամթերքի պահեստները կազմակերպվում են 1) Հաջի-Օմարում, 2) գեներալ Յուրկևիչի շտաբի տեղակայման վայրում, 3) Կյում-կյում-վադիկում, 4) Մուշում, Դատվանում, 5) Խնուսում, Լաթերում, 8) Չալկանում և միջանկյալները Դութախում, Քեթեվանում:

13) Շտապ գեկույցներն ուղարկել երեկոյան ժամը 10-ին և առավոտյան ժամը 10-ին:

14) Ես լինելու եմ Մուշում:

15) Տեղակալներն են՝ գնդապետ Օբրագցովը և գնդապետ Ջայցը:

Իսկականը ստորագրել է ջոկատի պետ՝ գեներալ-մայոր Նազարբեկովը:

Վավերացրել է՝ Գլխավոր շտաբի գնդապետ Պոլտավցը:

Ուղարկվել է 1916 թ. փետրվարի 27-ին, երեկոյան ժամը 7-ին»:

ները դեռևս անանցանելի էին որոշ տեղերում առատ ձյան հետևանքով: Որոշ տեղերում ձյան բարձրությունը մեկ սաժենից³⁶ ավելի էր: Քրդերի գլխավոր որջը Մախուբանկ գյուղն էր, որտեղ, եթե չեմ սխալվում, Մուսա բեկի բնակության վայրն էր:

Ֆոնա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 1-36: Բնագիր: Ձեռագիր

Ռուբեն Օ. Սահակյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը, կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանությունը, ինքնապաշտպանական մարտերը, հայկական ոստիկանության պատմությունը:

Summary

THE UNPUBLISHED MEMORIES OF TOVMAS NAZARBEGYAN

Military operation on the Caucasus Front from July 1914 to April 26, 1916.
Copy-book 9: from January 27 to February 27, 1916.

Ruben O. Sahakyan

Key words – Tovmas Nazarbekyan, Manazkert, Andranik, Qeri, D. Abaciev, Movses Silikyan (Silikov), Erzerum, Mush, Sasoun.

The 9th notebook of Tovmas Nazarbekyan's memoirs present the military operations that took place from January 27, 1916 to February 27, which brought a radical breakthrough in the battles on the Caucasus front.

In January-February 1916, the Caucasian army carried out simultaneous operations, which enabled it to gain an operative advantage over the enemy in both Taron and Upper Armenia. The Russian army continued its offensive in the direction of Erzerum, aiming to capture the main strategic stronghold of the Ottoman 3rd Army in Western Armenia. Tovmas Nazarbekyan proudly states that in difficult climatic conditions and with few losses the Russian troops managed to capture Erzerum which was considered impregnable. Commander of the 6th

³⁶ 1 սաժենը հավասար է 2, 134 ս:

Caucasian Regiment, Colonel Movses Silikyan was appointed commandant of Erzerum.

Simultaneously with the capture of Erzerum, the seizure of Mush was carried out by a group of Russian troops headed by Tovmas Nazarbekyan. Immediately after that, the general visited Mush, therefore he later described the Turkish atrocities in detail. In his memoirs, he cited the written testimonies of two officers of his division about the details of the massacres of Armenians in the city and valley of Mush. At that, one of the testimonies was checked and recorded through the interrogation of Armenian and Muslim witnesses. Only a few Armenian craftsmen were left alive in the city, who were needed to meet the needs of the army.

After capturing Mush and its valley, the Russians had to constantly fight the Kurdish gangs in the rear, which disrupted the regular supply and communication of the armed forces, as a result forcing them to deploy significant forces to protect the rear and carry out punitive actions.

On February 11, 1916, the Russians tried to seize Bitlis (Baghesh) quickly, but failed. However, after receiving appropriate assistance, General Abatsiev captured Bitlis on the night of February 18-19.

Резюме

НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте с июля
1914 г. по 26 апреля 1916 г.
Тетрадь 9: с 27 января по 27 февраля 1916 г.

Рубен О. Саакян

Ключевые слова - Товмас Назарбекян, Маназкерт, Андраник, Кери, Д. Абациев, М. Силикян (Силиков), Эрзерум, Муш, Сасун.

В 9-й тетради воспоминаний Товмаса Назарбекяна представлены военные действия с 27 января по 27 февраля 1916 г., которые привели к завершению коренной перелом, начавшийся на Кавказском фронте.

В январе-феврале 1916 г. Кавказская армия осуществила одновременные действия, которые дали возможность достичь оперативного преимущества перед противником как в Тароне, так и в Высокой Армении. Продолжалось наступле-

ние русской армии в эрзерумском направлении с целью занять Эрзерумскую крепость – главный стратегический опорный пункт 3-й османской армии в Западной Армении. Т. Назарбемян с гордостью констатирует, что русским войскам удалось в тяжелых природно-климатических условиях с малыми потерями занять Эрзерум, считающийся неприступным. Комендантом Эрзерума был назначен командующий 6-м Кавказским полком полковник Мовсес Силикян.

Параллельно с взятием Эрзерума было осуществлено также взятие Муша той группировкой русских войск, которой командовал Т. Назарбемян. Сразу после этого генерал был в Муше, поэтому впоследствии подробно описал зверства турков. В своих воспоминаниях он привел письменные свидетельства двух офицеров своей дивизии о деталях массовой резни армян из города Муша и Мушской долины. Причем одно из свидетельств было проверено и запротоколировано посредством допроса армянских и мусульманских свидетелей. В городе в живых оставили только несколько ремесленников, которые были нужны для удовлетворения нужд армии.

После завоевания Муша и долины русским пришлось вести беспрестанную борьбу против курдских банд, орудующих в тылу и срывающих регулярное снабжение и связь вооруженных сил, вследствие чего они были вынуждены выделить значительные силы для защиты тыла и проведения карательных действий.

11 февраля 1916 г. русские попробовали быстро завладеть также Битлисом (Багешом), однако потерпели неудачу. Но после поступления необходимой помощи генерал Абациев в ночь с 18 на 19 февраля все же занял Битлис.

REFERENCES

1. **Mikhajlov V. V.**, Razgrom tureckoj armii i ovladenije pervoklassnoj krepostju. Erzerumskaja operacija 1915-1916 gg. “Voenno-istoricheskij zurnal”, Moskva, 2006, N 8, str. 52 (**In Russian**).
2. **Budyonnij S. M.**, Projdennij put, Moskva, 1959 (**In Russian**).
3. **Sahakyan R.**, Ashot Atanasyani gorcuneyutyunë Arevmtyan Hayastani verashinutyanyan gwrcum, Banber Hayastani arkhivneri, 2007, N 1-2, eg 45 (**in Armenian**).